«Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Կրիմինալիստիկա
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Բ. Ալեքսանյան, Լ. Սարդարյան E-mail: benik1962@mail.ru, հեռ.091-35-83-13 E-mail: lusine.sardarian@gmail.com, հեռ. 093-85-53-05
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	3-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Կրիմինալիստիկա» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 32 ժամ դասախոսություն, 20 ժամ սեմինար, 12 ժամ գործնական, 36 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է ստուգարքով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարության իրավունք», «ՀՀ քրեական իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Կրիմինալիստիկա» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են կրիմինալիստիկայի առարկան, համակարգը, մեթոդները, կրիմինալիստիկական նույնացումը և խմբային պատկանելիության պարզումը, կրիմինալիստիկական տեխնիկայի ընդհանուր դրույթները, կրիմինալիստիկական լուսանկարչությունը, մարդու արտաքին հատկանիշների կրիմինալիստիկական նույնացման հնարավորությունները, հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը և դասակարգումը, կենսաբանական ծագման հետքերի և միկրոմասնիկների տեղն ու դերը հանցագործությունների բացահայտման և քննության գործում:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ՝ կրիմինալիստիկայի էության, խնդիրների, համակարգի, մեթոդների, կրիմինալիստիկական նույնացման տեսության, կրիմինալիստիկական տեխնիկայի ընդհանուր դրույթների, կրիմինալիստիկական լուսանկարչության հնարավորությունների, արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման, հետքերի կրիմինալիստիկական հետազոտման, կենսաբանական ծագման հետքերի և միկրոմասնիկների նախնական հետազոտման վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ներկայացնել կրիմինալիստիկայի դերը հանցագործությունների դեմ պայքարում, 2) ուսումնասիրել կրիմինալիստիկական նույնացման նշանակությունը ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման գործընթացում, 3) ներկայացնել կրիմինալիստիկական լուսանկարչության համակարգը, խնդիրները, կիրառման հնարավորությունները, 4) ներկայացնել մարդու արտաքին հատկանիշների կրիմինալիստիկական նույնացման հնարավորությունները, 5) ուսումնասիրել հետքերի կրիմինալիստիկական նշանակությունը և դասակարգումը, 6) ներկայացնել կենսաբանական ծագման հետքերի և միկրոմասնիկների տեղն ու դերը հանցագործությունների բացահայտման և քննության գործում:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1)սահմանել և թվարկել կրիմինալիստիկայի հասկացությունը, համակարգը, մեթոդները 2)ներկայացնել կրիմինալիստիկական նույնացման նշանակությունը, օբյեկտները և դրանց նույնացման մեթոդիկան 3)ներկայացնել կրիմինալիստիկական լուսանկարչության համակարգը, խնդիրները, մեթոդները և մասնավոր հնարքները, 4)ներկայացնել մարդու արտաքին հատկանիշների տարրերը և «Բանավոր պատկեր» կազմելու մեթոդիկան, 5)ներկայացնել հետքերի հայտնաբերման, ամրագրման, զննության, վերցնելու և փաթեթավորման միջոցները, մեթոդներն ու հնարքները, 6)ներկայացնել կենսաբանական ծագման հետքերի և միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, զննության, վերցնելու և փաթեթավորման միջոցները, մեթոդներն ու հնարքները:
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. Համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2004 – 416 էջ 4. Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք /Լևոն Օհանյան. – 2-րդ հրատ.՝ փոփոխ. և լրաց. – ԵՊՀ հրատ., 2010. 512 էջ 5. Օհանյան Լևոն. Կրիմինալիստիկա: - Երևանի պետ. Համալս. – Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2004 – 504 էջ 6. Կրիմինալիստիկա: ՈՒս. Ձեռնարկ /Ա.Հ. Բախշինյան, Բ.Զ. Ալեքսանյան, Ս.Ա. Մարգարյան. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2003. – 228 էջ 7. Դեպքի վայրի զննության մարտավարություն. Ուղեցույց /Մ. Սեմերջյան, Բ. Ալեքսանյան, Ս. Մարգարյան/ 2017 թ., 8. Պլանների, սխեմաների կազմումը դեպքի վայրի զննության ընթացքում. գիտագործնական ձեռնարկ /Բ.Ալեքսանյան, Հ.Կուծանյան, Լ.Սարդարյան/

		2019թ. 9. Անձի նույնականացումը արտաքին հատկանիշներով: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Բ.Զ. Ալեքսանյան/ Եր.: Հեղինակային հրատարակություն, 2017 10. Криминалистика: учебник для бакалавров /Ю. В. Францифоров, А.Б. Смушкин, А.А. Рождествина. – 2-е изд., стер. – М.: Издательство «Омега – Л», 2015 – 260 с. 11. Криминалистика: учебник / под общей ред. А.Г. Филиппова. – изд., перераб. и доп. – М.: Высшее образование. 2009. – 835 с. 12. Криминалистика: учебник / под ред. А.Г. Филиппова. – М.: Высшее образование, Юрайт – Издат, 2009, - 441с 13. Криминалистика: учебник /Т.В. Аверьянова, Р.С. Белкин, Ю.Г. Корухов, Е.Р. Россинская. – 3-е нзд., перереб. и доп. – М.: Норма, 2008. – 944с.: ил. 14. Криминалистика: Учебник для вузов /Под ред. заслуженного деятеля науки РФ, проф. Р.С. Белкина. – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2005. – 992с 15. Криминалистика. Конспект лекций. Сост. Н.Н. Смирнова. – СПб.: «Лексикон», Агенство «ВиТ – принт», 2002 – 192с 16. БАЕВ О.Я.Основы криминалистики: курс лекций, - М.: Экзамен, 2001. – 288с
Լրացուցիչ		1. Անձի նույնականացումը արտաքին հատկանիշներով: ՈՒս. Ձեռնարկ /S.S. Մանուկյան, Եր.: 2015 – 57 էջ 2. Ալեքսանյան Մ., Նախնական քննություն. Եր. 2002 – 770 էջ: 3. Ալեքսանյան Մ. Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/.- Եր.: Միվա-Պրեսս, 2009 4. Ա.Բ. Ավագյան, Ա.Գ. Հովսեփյան, Տ.Ռ. Պետրոսյան. «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան», Եր., «այբ-Քե». 1993թ. 5. Шашонова Т.Н. Следы человека на месте преступления, их роль в доказывании (биологический аспект). – М.: МосУ МВД России. Издательство «Щит –М», 2009. – 153с 6. Портретная экспертиза: Учебно-практическое пособие /под ред. д.ю.н., проф. А.М. Зинина. – М.: Издательство «Экзамен». нздательство «Право и закон», 2004, - 160с 7. Справочная книга криминалиста /Руководитель авторского коллектива и ответственный редактор –доктор юридических наук, професор, Заслуженный деятель науки Россиской Федерации Н.А.Селиванов.-М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА - М), 2001 – 727с 8. Зинин А.М. Субьективный портрет. Курс лекций. – М.: Издательство «Щит - М», 2012. – 136стр. 9. Н.П. Майлис, Т.Ф. Одиночкина, О.А.Соколова. Трассологиа: Учебник /Под ред. Н.П. Майлис. – М.: Щит – М, 2011. – 328с 10. Процессуальные акты предварительного расследования. Примерные образцы. Москва. «Юридическая литература». 1991 11. Осмотр места происшествия. Справочник следователя. Москва.: «Юридическая литература» 1982

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգման ձևը ստուգարք	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
			ստուգված
			չստուգված
			չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգարք) ա-	

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		ռաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 1 **Կրիմինալիստիկայի առարկան, խնդիրները, համակարգը և մեթոդները** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկայի առարկան և խնդիրները: 2. Կրիմինալիստիկայի համակարգը: 3. Կրիմինալիստիկայի մեթոդները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն Հարց 3 անցկացվում է դասախոսություն Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով:

Թեմա 2 **Կրիմինալիստիկական նույնացումը և խմբային պատկանելիության պարզումը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկական նույնացման և խմբային պատկանելիության պարզման հասկացությունը և նշանակությունը: 2. Կրիմինալիստիկական նույնացման տեսակները: 3. Կրիմինալիստիկական նույնացման մեթոդիկան:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով:

Թեմա 3 **Կրիմինալիստիկական տեխնիկայի ընդհանուր դրույթները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկական տեխնիկայի հասկացությունը և առարկան: Քրեական դատավարությունում կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցների կիրառման իրավական հիմքերը: 2. Ապացույցների հայտնաբերման, ամրագրման, վերցնելու և նախնական հետազոտման ենթարկելու կրիմինալիստիկակն տեխնիկայի միջոցները: 3. Իրեղեն ապացույցների լաբորատոր հետազոտությունների ընթացքում կիրառվող կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն, որն ուղեկցվում է տարբեր տեխնիկական միջոցների ցուցադրումով: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ:

Թեմա 4 **Կրիմինալիստիկական լուսանկարչություն** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը և համակարգը: 2. Օպերատիվ և քննչական լուսանկարչություն: 3. Փորձագիտական լուսանկարչությանան հիմնական մեթոդները և հնարավորությունները:	Հարց 1 անցկացվում է դասախոսություն: Հարց 2 անցկացվում է դասախոսություն: Հարց 2 անցկացվում է գործնական պարապմունք՝ նախապես ընտրված իրադրությունում լուսանկարահանման մասնավոր հնարքների կիրառմամբ: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարց 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք:

Թեմա 5 **Մարդու արտաքին պատկերի մասին կրիմինալիստիկական ուսմունքը (հաբիտոսկոպիա)** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման**

	մեթոդաբանություն
1. Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթները: 2. Մարդու արտաքին հատկանիշների նկարագրման համակարգը: 3. Մարդու արտաքին հատկանիշների մասին տեղեկությունների հավաքման մեթոդները և միջոցները: 4. Անձի փորձագիտական նույնացումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն, որն ուղեկցվում է դիդակտիկ նյութերի ցուցադրմամբ: Հարց 2 գործնական պարապմունք՝ ներկայացված լուսանկարների հիման վրա «բանավոր պատկեր» կազմելու եղանակով Հարց 2 գործնական պարապմունք՝ համակարգչային համապատասխան ծրագրի օգնությամբ կոմպոզիցիոն պատկերների կազմում: Հարցեր 3-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 սեմինար պարապմունքն՝ խմբային քննարկման եղանակով:

Թեմա 6 **Հետքերի կրիմինալիստիկական հետազոտումը (դատական հետքաբանություն – տրասոլոգիա)** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)**	
Թեմայի հարցերը	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հետքերի հասկացությունը և կրիմինալիստիկական նշանակությունը: 2. Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը: 3. Հետքերի հայտնաբերման, ամրագրման, զննման, և հետազոտման ընդհանուր կանոնները: 4. Մարդու կողմից թողնվող հետքերը: 5. Տրանսպորտային միջոցների հետքերը: 6. Ջարդող գործիքների (կոտրանքի) հետքերը: 7. Փականների և կապարակնիքների կրիմինալիստիական հետազոտումը և այլ հետքեր:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն Հարցեր 4 անցկացվում է դասախոսություն Հարց 4 գործնական պարապմունք՝ անհրաժեշտ միջոցների և նյութերի օգնությամբ իրականացվում է մատնադրոշմման գործընթացը: Հարց 4 գործնական պարապմունք՝ կրիմինալիստիկական փորձակայանում անհրաժեշտ միջոցների և նյութերի օգնությամբ իրականացվում է կոշիկի հետքից ծեփապատճե պատրաստելու գործընթացը: Հարցեր 5-7 անցկացվում է դասախոսություն Հարցեր 1-7 անցկացվում է սեմինար պարապմունք՝ խմբային քննարկման եղանակով

Թեմա 7 **Կենսաբանական ծագման հետքերը կրիմինալիստիկայում** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Արյան հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 2. Սերմնահեղուկի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 3. Թքի հետքերը, որպես հետազոտման օբյեկտ: 4. Մազերը, որպես հետազոտման օբյեկտ:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ որն ուղեկցվում է համապատասխան տեխնիկական միջոցների ցուցադրումով: Հարցեր 1-2 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով Հարցեր 3-4 անցկացվում է դասախոսություն՝ որն ուղեկցվում է համապատասխան տեխնիկական միջոցների ցուցադրումով Հարց 3-4 անցկացվում է սեմինար պարապմունք՝ խմբային քննարկման ձևով, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ մանրադիտակի կիրառմամբ:

Թեմա 8 **Միկրոմասնիկները որպես կրիմինալիստիկական ինֆորմացիայի կրիչներ** **(2 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**

Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
1. Միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը: 2. Միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները: 3. Հանցագործությունների որոշ տեսակների համար բնորոշ միկրոմասնիկների առավել տիպային զուգակցությունները: 4. Միկրոմասնիկների փորձագիտական հետազոտումը:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: Հարցեր 3-4 անցկացվում է սեմինար պարապմունք, կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ մանրադիտակի կիրառմամբ:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրիմինալիստիկա» առարկայից
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի
առկա անվճար ուսուցման 3-րդ կուրսի ստուգարքի

1. Կրիմինալիստիկայի առարկան և խնդիրները
2. Կրիմինալիստիկայի համակարգը և մեթոդները
3. Կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը, էությունը և նպատակները
4. Կրիմինալիստիկական նույնացման օբյեկտները և դրանց դասակարգումը
5. Կրիմինալիստիկական նույնացման տեսակները
6. Կրիմինալիստիկական նույնացման մեթոդիկան
7. Կրիմինալիստիկական տեխնիկայի հասկացությունը, առարկան և քրեական դատավարությունում կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցների կիրառման իրավական հիմքերը
8. Ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, վերցնելու և նախնական հետազոտման համար կիրառվող կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցները
9. Կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը և համակարգը
10. Օպերատիվ-քննչական լուսանկարչության խնդիրները, մեթոդները և մասնավոր հնարքները
11. Կրիմինալիստիկական լուսանկարչության կիրառման արդյունքների դատավարական ամրագրումը
12. Դատահետազոտական լուսանկարչության հիմնական մեթոդներն ու հնարավորությունները
13. Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթները
14. Մարդու արտաքին հատկանիշների նկարագրման համակարգը
15. Մարդու արտաքին հատկանիշների մասին տեղեկությունների հավաքման մեթոդները և միջոցները
16. Ներկայացվող ճանաչողական լուսանկարների զննման հիման վրա կազմել նրանում արտացոլված անձի «բանավոր պատկերը»
17. Զննել ներկայացվող լուսանկարները և կազմել դիմանկարային փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
18. Հետքերի հասկացությունը և կրիմինալիստիկական նշանակությունը
19. Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը
20. Հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և հետազոտման ընդհանուր կանոնները
21. Ձեռքերի հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
22. Ոտքի հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
23. Ատամների, եղունգների և շրթունքների հետքերը ու դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
24. Փականների և կապարակնիքների կրիմինալիստիկական հետազոտումը
25. Տրանսպորտային միջոցների և կոտրանքի (ջարդող գործիքների) հետքերը, դրանց կրիմի-նալիստիկական նշանակությունը
26. Գործնականորեն ցուցադրել ներկայացվող «իրեղեն ապացույցների» վրա եղած մատնահետքերի հայտնաբերման, ֆիքսման և վերցնելու հնարքները համապատասխան տեխնիկական միջոցների գործադրմամբ
27. Ներկայացվող մատնադրոշմային քարտի վրա եղած մատնադրոշմների գծանախշերի տեսակներից ելնելով՝ արտածել մատնադրոշմային հիմնական բանաձևը
28. Ներկայացվող մատնադրոշմային քարտի վրա եղած մատնադրոշմների գծանախշերի տեսակներից ելնելով՝ արտածել մատնադրոշմային լրացուցիչ բանաձևը
29. Զննել կոշիկի ծավալային հետքից պատրաստված գիպսե ծեփապաճենը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
30. Զննել ներկայացվող ջարդող գործիքը և նրանից առաջացած հետքերը փայտի վրա, կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
31. Զննել մատնադրոշմային թաղանթի վրա ֆիքսված մատնահետքը և կասկածյալից վերցված տասմատնյա մատնադրոշմային քարտը, կազմել մատնադրոշմային փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
32. Զննել ներկայացվող ջարդող գործիքը և փայտի վրա առաջացած հետքերն ու կազմել դատահետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
33. Զննել ներկայացվող փականը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
34. Ներկայացվող հիմնական բանաձևերով որոշել, թե որ մատների վրա կան գալարաձև նախշեր
35. Ներկայացվող լրացուցիչ մատնադրոշմային բանաձևերով որոշել աջ և ձախ ձեռքերի յուրաքանչյուր մատի նախշատեսակը
36. Ներկայացվող մատնադրոշմային լրացուցիչ բանաձևերով արտածել հիմնական բանաձևերը
37. Ստուգել ճիշտ են արդյոք արտածված հիմնական մատնադրոշմային բանաձևերը

38. Կենսաբանական ծագում ունեցող հետքերը և դրանց հայտնաբերման, ֆիքսման, վերցնելու ու զննության ընդհանուր կանոնները
39. Միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը
40. Միկրոմասնիկների հայտնաբերման, ամրագրման, փաթեթավորման և վերցնելու ընդհանուր կանոնները

«Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ		Կրիմինալիստիկա
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ		
ՖԱԿՈՒԼՏԵՏ		Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ		Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ		Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ		Բ. Ալեքսանյան, Լ. Սարդարյան E-mail: benik1962@mail.ru, հեռ.091-35-83-13 E-mail: lusine.sardarian@gmail.com, հեռ. 093-85-53-05
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ		3-րդ կուրս, 2-րդ կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ		բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ		3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ		«Կրիմինալիստիկա 2» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 48 ժամ դասախոսություն, 26 ժամ սեմինար, 6 ժամ գործնական, 36 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է քննությունով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ		Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարության իրավունք», «ՀՀ քրեական իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ		«Կրիմինալիստիկա» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են զենքերի, ռազմամթերքի, դրանց կիրառության հետքերի կրիմինալիստիկական հետազոտումը, փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման հասկացությունը և բնագավառները, հաշվառման տեսակները, կրիմինալիստիկական մարտավարության ընդհանուր դրույթները, քննության պլանավորման և վարկածների ուսումնքը, քննչական գործողությունների՝ զննության, փորձարարության, ձերբակալման, խուզարկության, առգրավման ու հարցաքննության մարտավարական առանձնահատկությունները:

ՆՊԱՏԱԿ **ԽՆԴԻՐ/ՆԵՐ**		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ՝ զենքերի, ռազմամթերքի, դրանց կիրառության հետքերի, սառը և նետողական զենքերի, փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման բնագավառների, հաշվառման տեսակների և դրանց վարման կարգի, կրիմինալիստիկական մարտավարության խնդիրների, քննության պլանավորմանը ներկայացվող պահանջների և վարկածների, առանձին քննչական գործողությունների անցկացման մարտավարության վերաբերյալ: Դասընթացի խնդիրներն են՝ 1) ուսումնասիրել զենքերի, ռազմամթերքի տեսակները և դրանց կիրառումից առաջացած հետքերը, սառը և նետողական զենքերը 2) ներկայացնել ձեռագրի նույնացման հատկանիշները, ինչպես նաև փաստաթղթերի նախնական բովանդակության մեջ կատարված փոփոխությունների նշանակությունը ապացույցների հավաքման, ստուգման և գնահատման գործընթացում, 3) ուսումնասիրել կրիմինալիստիկական հաշվառման տեսակները և դրանց վարման կարգը, 4) ներկայացնել քննության պլանավորման նշանակությունը, դրան ներկայացվող պահանջները, վարկածների տեսակները և դրանց ստուգման առանձնահատկությունները, 5) ուսումնասիրել առանձին քննչական գործողությունների տեսակները, դրանց նախապատրաստմանն ու կատարմանը բնորոշ հանձնարարականները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) ներկայացնել ձգաբանական բնույթի օբյեկտների և հետքերի հայտնաբերման, ամրագրման, զննման, վերցնելու և փաթեթավորման միջոցները, մեթոդներն ու հնարքները, 2) ներկայացնել ձեռագրի միջոցով անձի հետախուզման աղյուսակի կազմման մեթոդիկան, 3) թվարկել փաստաթղթերի նախնական բովանդակության մեջ կատարված փոփոխությունների եղանակներով պայմանավորված համապատասխան հատկանիշները, 4) թվարկել հաշվառման տեսակները և ներկայացնել դրանց վարման առանձնահատկությունները, 5) ներկայացնել գրավոր պլան կազմելու տեխնիկան և վարկածների առաջադրման ու ստուգման կանոնները, 6) ներկայացնել առանձին քննչական գործողությունների անցկացման մարտավարական հնարքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. Համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2004 – 416 էջ **4.** Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք /Լևոն Օհանյան. – 2-րդ հրատ.՝ փոփոխ. և լրաց. – ԵՊՀ հրատ., 2010. 512 էջ **5.** Օհանյան Լևոն. Կրիմինալիստիկա: - Երևանի պետ. Համալս. – Եր.: Տիգրան Մեծ հրատ., 2004 – 504 էջ 6. Կրիմինալիստիկա: ՈՒս. Ձեռնարկ /Ա.Հ. Բախշինյան, Բ.Զ. Ալեքսանյան, Ս.Ա. Մարգարյան. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2003. – 228 էջ **7.** Դեպքի վայրի զննության մարտավարություն. Ուղեցույց /Մ. Սեմերջյան, Բ. Ալեքսանյան, Ս. Մարգարյան/ 2017 թ.,

		8. Պլանների, սխեմաների կազմումը դեպքի վայրի զննության ընթացքում. գիտագործնական ձեռնարկ /Բ.Ալեքսանյան, Հ.Կուծանյան, Լ.Սարդարյան/ 2019թ. **9.** Անձի նույնականացումը արտաքին հատկանիշներով: Ուսումնամեթոդական ձեռնարկ /Բ.Զ. Ալեքսանյան/ Եր.: Հեղինակային հրատարակություն, 2017 10. Криминалистика: учебник для бакалавров /Ю. В. Францифоров, А.Б. Смушкин, А.А. Рождествина. – 2-е изд., стер. – М.: Издательство «Омега – Л», 2015 – 260 с. 11. Криминалистика: учебник / под общей ред. А.Г. Филиппова. – изд., перераб. и доп. – М.: Высшее образование. 2009. – 835 с. 12. Криминалистика: учебник / под ред. А.Г. Филиппова. – М.: Высшее образование, Юрайт – Издат, 2009, - 441с 13. Криминалистика: учебник /Т.В. Аверьянова, Р.С. Белкин, Ю.Г. Корухов, Е.Р. Россинская. – 3-е нзд., перереб. и доп. – М.: Норма, 2008. – 944с.: ил. 14. Криминалистика: Учебник для вузов /Под ред. заслуженного деятеля науки РФ, проф. Р.С. Белкина. – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2005. – 992с 15. Криминалистика. Конспект лекций. Сост. Н.Н. Смирнова. – СПб.: «Лексикон», Агенство «ВиТ – принт», 2002 – 192с 16. БАЕВ О.Я.Основы криминалистики: курс лекций, - М.: Экзамен, 2001. – 288с
Լրացուցիչ		1. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար. – Եր.: Լիմուշ. 2013. – 135էջ 2. Ալեքսանյան Մ., Նախնական քննություն. Եր. 2002 – 770 էջ: 3. Ալեքսանյան Մ. Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/.- Եր.: Միվա-Պրեսս, 2009 4. Ա.Բ. Ավագյան, Ա.Գ. Հովսեփյան, Տ.Ռ. Պետրոսյան. «Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան», Եր., «այբ-Քե». 1993թ. 5. Настолная книга следователя /Рук. авт. кол. Н.П. Дудин; отв. ред. О.Н Коршунова, В.С. Шадрин. – СПб.: Нздательство Р. Асланова «Юридический центр Пресс.», 2008. – 908ст 6. Настольная книга следователя. Тактические приемы осмотра места происшествия и допросов при расследовании преступлений различной категории: научно-методическое пособие /под ред. канд. Юрид. Наук А.И.Дворкина.- М.: Издательство «Экзамен», 2006.- 637 с. 7. Справочная книга криминалиста /Руководитель авторского коллектива и ответственный редактор –доктор юридических наук, професор, Заслуженный деятель науки Россиской Федерации Н.А.Селиванов.-М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА - М), 2001 – 727с 8. Следственные действия. Криминалистические рекомендации. Типовые образцы документов. /Под ред. В.А.Образцова.- М.: Юристь, 1999,- 501 с. 9. Процессуальные акты предварительного расследожания. Примерные образцы. Москва. «Юридическая литература». 1991 10. Осмотр места происшествия. Справочник следователя. Москва.: «Юридическая литература» 1982

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Ընթացիկ ստուգման ձևը քննություն	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով
		18-20	Գերազանց
		13-17	Լավ
		8-12	Բավարար
		0-7	Անբավարար

		0	Չներկայացած
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»: Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ներկայություն **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:	
		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:	
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:	
		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:	

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 9 **Հրազենի, ռազմամթերքի, սառը զենքի և դրանց կիրառումից առաջացած հետքերի կրիմինալիստիկական հետազոտումը (դատական ձգաբանություն)** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական ձգաբանության հասկացությունը և դատաձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը: 2. Տեղեկություններ զենքերի և ռազմամթերքների մասին: 3. Զենքի դետալների հետքերը գնդակների և պարկուճների վրա: Կրակոցի հետքերը: 4. Զենքերի, փամփուշտների, կրակված գնդակների և պարկուճների զննումը: 5. Սառը և նետողական զենքերի կրիմինալիստիկական հետազոտումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով Հարց 3 անցկացվում դասախոսություն Հարցեր 4-5 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-5 անցկացվում է սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում: Կազմակերպվում են թեմատիկ ցուցադրություններ: Հարց 4-5 անցկացվում է գործնական պարապմունք՝ սովորողները իրականացնում են հրազենի, փամփուշտների, կրակված գնդակների, պարկուճների և սառը զենքի զննություն:

Թեմա 10 **Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտումը** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը, իրեղեն ապացույց փաստաթղթերը որպես կրիմինալիստիկական հետազոտման օբյեկտ: 2. Ձեռագրի կրիմինալիստիկական հետազոտումը: 3. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտում:	Հարց 1 անցկացվում է դասախոսություն: Հարց 1-2 սեմինար պարապմունք: Քննարկումները զուգորդվում են սովորողների ձեռագրերի ուսումնասիրմամբ: Հարց 2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 անցկացվում է սեմինար պարապմունք, կազմակերպվում է դիդակտիկ նյութի ցուցադրություն:

Թեմա 11 **Կրիմինալիստիկական գրանցում** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկական գրանցման հասկացությունը, իրավական հիմքերը և համակարգը: 2. Կրիմինալիստիկական հաշվառման տեսակները:	Հարց 1 անցկացվում է դասախոսություն: Հարց 2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք՝ խմբային քննարկման եղանակով:

Թեմա 12 **Կրիմինալիստիկական մարտավարության ընդհանուր դրույթները** **(2 ժամ դասախոսություն)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Կրիմինալիստիկական մարտավարության հասկացությունը, առարկան, խնդիրները և աղբյուրները: 2. Քննչական գործողությունների կատարման օրինականությունը և դատավարական կարգը: 3. Քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն:

միջոցառումներ:	

Թեմա 13 **Քննության պլանավորումը և վարկածների մասին ուսմունքը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հանցագործությունների քննության պլանավորման հասկացությունը և նշանակությունը: Պլանավորմանը ներկայացվող պահանջները: 2. Քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումը և ստուգումը: 3. Գրավոր պլան կազմելու տեխնիկան:	Հարց 1 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 2-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով:

Թեմա 14 **Քննչական զննման և քննման մարտավարությունը** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննչական զննման հասկացությունը, խնդիրներն ու տեսակները: 2. Քննչական զննման ընդհանուր դրույթները: 3. Դեպքի վայրի զննման մարտավարությունը: 4. Դիակի արտաքին զննումը հայտնաբերման տեղում: 5. Առանձին առարկաների, փաստաթղթերի և կենդանիների զննում: Քննումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում: Հարցեր 4 -5 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-5 սեմինար պարապմունք: Հարց 5 գործնական պարապմունք կրիմինալիստիկական փորձակայանում:

Թեմա 15 **Քննչական փորձարարության մարտավարությունը** **(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննչական փորձարարության հասկացությունը, նպատակներն ու տեսակները: 2. Քննչական փորձարարության նախապատրաստությունը: 3. Քննչական փորձարարության մարտավարությունը և արդյունքների ամրագրումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 սեմինար պարապմունք, առաջադրված հարցերի քննարկում: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով:

Թեմա 16 **Ձերբակալման մարտավարությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ձերբակալման հասկացությունը և կատարման հիմքերը: 2. Ձերբակալման նախապատրաստությունը: 3. Ձերբակալման մարտավարական հնարքները և դատավարական ամրագրումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան ձևաչափով:

Թեմա 17 **Խուզարկության և առգրավման մարտավարությունը** **(6 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Խուզարկության և առգրավման հասկացությունը, խնդիրներն ու տեսակները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 սեմինար պարապմունք, առա-

2. Խուզարկության և առգրավման նախապատրաստությունը: 3. Խուզարկության մարտավարական հնարքները:	ջադրված հարցերի քննարկում: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 սեմինար պարապմունք, առաջադրված հարցերի քննարկում, խուզարկության հնարքների ծանոթացում կրիմինալիստիկական փորձակայանում:

Թեմա 18 Հարցաքննության մարտավարությունը (6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հարցաքննության ընդհանուր դրույթները: 2. Հարցաքննության նախապատրաստությունը: 3. Վկաների և տուժողների հարցաքննության մարտավարությունը: 4. Կասկածյալների և մեղադրյալների հարցաքննության մարտավարությունը: 5.Առերեսման մարտավարությունը: 6. Անչափահասների հարցաքննության առանձնահատկությունները: Փորձագետի հարցաքննությունը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 5-6 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-6 սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրիմինալիստիկա» առարկայից
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման 3-րդ կուրսի քննության

1. Կրիմինալիստիկայի առարկան և խնդիրները
2. Կրիմինալիստիկայի համակարգը
3. Կրիմինալիստիկայի մեթոդները
4. Կրիմինալիստիկական նույնացման (իդենտիֆիկացիայի) հասկացությունը և նպատակները
5. Կրիմինալիստիկական նույնացման օբյեկտները և դրանց դասակարգումը
6. Կրիմինալիստիկական նույնացման տեսակները
7. Օբյեկտների հետազոտման մեթոդիկան նույնացման և խմբային պատկանելիության պարզման ժամանակ
8. Կրիմինալիստիկական տեխնիկայի հասկացությունը, առարկան և քրեական դատավարությունում դրա միջոցների կիրառման իրավական հիմքերը
9. Ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, վերցնելու և նախնական հետազոտման համար կիրառվող կրիմինալիստիկական տեխնիկայի միջոցները
10. Կրիմինալիստիկական լուսանկարչության հասկացությունը, նշանակությունը և համակարգը
11. Օպերատիվ-քննչական լուսանկարչության խնդիրները և եղանակները
12. Դատահետազոտական լուսանկարչության հիմնական մեթոդներն ու հնարավորությունները
13. Լուսանկարների ապացուցողական նշանակությունը և դատավարական ամրագրումը
14. Արտաքին հատկանիշներով անձի կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթները
15. Մարդու արտաքին հատկանիշների մասին տեղեկությունների հավաքման մեթոդները և միջոցները
16. Ներկայացվող ճանաչողական լուսանկարների զննման հիման վրա կազմել նրանում պատկերված անձի «Բանավոր պատկերը»
17. Զննել ներկայացվող լուսանկարները և կազմել դիմանկարային փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
18. Հետքերի հասկացությունը և կրիմինալիստիկական նշանակությունը
19. Հետքերի առաջացման մեխանիզմը և դասակարգումը
20. Հետքերի հայտնաբերման, ֆիքսման, զննման և հետազոտման ընդհանուր կանոնները
21. Ձեռքերի հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
22. Ոտքերի հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
23. Ատամների, շրթունքների ու եղունգների հետքերը և դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
24. Տրանսպորտային միջոցների հետքերը, դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
25. Կոտրանքի (ջարդող գործիքների) հետքերը, դրանց կրիմինալիստիկական նշանակությունը
26. Փականների կրիմինալիստիկական հետազոտումը
27. Համապատասխան տեխնիկական միջոցների գործադրմամբ գործնականորեն ցուցադրել ներկայացվող «իրեղեն ապացույցների» վրա եղած մատնահետքերի հայտնաբերման, ֆիքսման և վերցնելու հնարքները
28. Ներկայացվող մատնադրոշմային քարտի վրա եղած մատնադրոշմների գծանախշերի տեսակներից ելնելով՝ արտածել մատնադրոշմային հիմնական բանաձևը
29. Ներկայացվող մատնադրոշմային քարտի վրա եղած մատնադրոշմների գծանախշերի տեսակներից ելնելով՝ արտածել մատնադրոշմային լրացուցիչ բանաձևը
30. Զննել կոշիկի ծավալային հետքից պատրաստված գիպսե ծեփապատճենը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
31. Զննել ներկայացվող գործիքը և նրանից առաջացած հետքերը փայտի վրա, կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
32. Զննել մատնադրոշմային թաղանթի վրա պատճենված մատնահետքը և կասկածյալից վերցված տասմատնյա մատնադրոշմային քարտը, կազմել մատնադրոշմային փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
33. Զննել ներկայացվող առարկան ու փայտի վրա դրանից թողնված հետքերն և կազմել հետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
34. Ներկայացվող հիմնական բանաձևերով որոշել, թե որ մատների վրա կան գալարաձև նախշեր
35. Ներկայացվող լրացուցիչ մատնադրոշմային բանաձևերով որոշել աջ և ձախ ձեռքերի յուրաքանչյուր մատի նախշատեսակը
36. Ներկայացվող մատնադրոշմային լրացուցիչ բանաձևերով արտածել հիմնական բանաձևը

37. Ստուգել ճիշտ է արդյոք արտածված հիմնական մատնադրոշմային բանաձևերը
38. Կենսաբանական ծագման հետքերը և դրանց հայտնաբերման, ամրագրման, վերցնելու և զննության ընդհանուր կանոնները
39. Միկրոմասնիկների ընդհանուր բնութագիրը և դրանց հայտնաբերման, ամրագրման, վերցնելու ու զննության ընդհանուր կանոնները
40. Դատական ձգաբանության հասկացությունը և դատաձգաբանական հետազոտություններով լուծվող հարցերը
41. Զենքի դետալների հետքերը գնդակների և պարկուճների վրա
42. Կրակոցի հետքերի զննումը և հետազոտումը
43. Զենքի, փամփուշտների, կրակված գնդակների ու պարկուճների զննումն ու հետազոտումը
44. Զենքերի դասակարգումը
45. Սառը և նետողական զենքի հասկացությունը: Դրանց ներկայացվող քրեագիտական պահանջները
46. Զննել կրակված գնդակը, պարկուճը և կազմել դեպքի վայրի զննության արձանագրության նկարագրական մասը
47. Զննել ներկայացվող զենքը և կազմել դեպքի վայրի զննության արձանագրության նկարագրական մասը
48. Զննել ներկայացվող դանակը և կազմել դեպքի վայրի զննության արձանագրության նկարագրական մասը
49. Զննել ներկայացվող գնդակը, պարկուճը և զենքը ու կազմել փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
50. Փաստաթղթերի կրիմինալիստիկական հասկացությունը: Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման նշանակությունը և տեսակները
51. Ձեռագրի միջոցով անձի կրիմինալիստիկական նույնացման հասկացությունը
52. Ձեռագրի նույնացման հատկանիշները
53. Ձեռագրի հատկանիշների բնական և դիտավորյալ փոփոխությունները, փաստաթուղթը գրող անձի հետախուզումը ձեռագրի միջոցով
54. Կնիքների և շտամպների դրոշմների կեղծման եղանակները, կեղծման հատկանիշները և դրանց հետազոտման մեթոդները
55. Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հասկացությունը և խնդիրները
56. Ստորագրությունների տեխնիկական կեղծման եղանակները, կեղծման հատկանիշները և դրանց հետազոտման մեթոդները
57. Այրված և պատռված փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտումը, դրանց վրա եղած գրառումները ընթերցելու համար
58. Զննել մեխանիկական ջնջման ենթարկված փաստաթուղթը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
59. Ներկայացվող ձեռագիր տեքստի հետազոտման միջոցով պարզել գրավոր խոսքի և տեղագրական հատկանիշներն ու գրելու սովորութային առանձնահատկությունները
60. Ներկայացվող ձեռագիր տեքստի հետազոտման միջոցով պարզել դրա ընդհանուր և մասնավոր հատկանիշները
61. Զննել ներկայացվող ձեռագրերը (հետազոտվող ձեռագիրը ու ձեռագրի նմուշները) և կազմել փորձաքննություն նշանակելու մասին որոշման եզրափակիչ մասը
62. Ներկայացվող ձեռագիր տեքստի զննման ու հետազոտման միջոցով կազմել գրող անձի հետախուզման աղյուսակ
63. Զննել ներկայացվող պահանջագիրը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
64. Զննել ներկայացվող կարգագիրը և կազմել զննության արձանագրության նկարագրական մասը
65. Կրիմինալիստիկական հաշվառման հասկացությունը, նշանակությունը և տեսակները
66. Չբացահայտված հանցագործությունների հաշվառումը ըստ կատարման եղանակի: Հափշտակված, կորած ապրանքների և կենդանիների հաշվառումը
67. Անհայտ կորած անձանց և չճանաչված դիակների հաշվառումը
68. Հանցագործություն կատարած անձանց անվանական (այբենական) և մատնադրոշմային հաշվառումները
69. Գնդակապարկուճային հաշվառումը
70. Հանցագործությունների քննության պլանավորման հասկացությունը, նշանակությունը, դրան ներկայացվող պահանջները և գրավոր պլանի տարրերը
71. Կրիմինալիստիկական մարտավարության առարկան, խնդիրները և աղբյուրները
72. Քննչական վարկածների հասկացությունը, տեսակները, առաջադրումն ու ստուգումը
73. Քննման մարտավարությունը

74. Դիակի արտաքին զննումը հայտնաբերման տեղում
75. Քննչական զննման մասնակիցները և նրանցից յուրաքանչյուրի դերը
76. Դեպքի վայրի զննության նախապատրաստությունը
77. Քննչական զննման հասկացությունը, խնդիրները և տեսակները
78. Քննչական զննման հիմնական դրույթները (զննմանը ներկայացվող պահանջները):
79. Դեպքի վայրի զննության մարտավարությունը
80. Իրերի, առարկաների և փաստաթղթերի զննման մարտավարությունը
81. Քննչական փորձարարության հասկացությունը, նպատակները և տեսակները
82. Քննչական փորձարարության նախապատրաստումը
83. Քննչական փորձարարության անցկացման մարտավարական հնարքները և արդյունքների դատավարական ամրապնդումը